



Կալիֆորնիայի Պաշտպանության և
Փաստաբանության համակարգ
Անվճար հեռախոսահամար (800) 776-5746

Կալիֆորնիայի ամերիկյան աշխատանքային կենտրոն (AJCC, America's Job Center of California)

Փետրվար, 2014թ., հրատ. #5521.10 - Armenian

Ի՞նչ է Կալիֆորնիայի ամերիկյան աշխատանքային կենտրոնը:

Կալիֆորնիայի ամերիկյան աշխատանքային կենտրոնը (նախկին «One-Stop Career Center») ստեղծվել է «Աշխատուժի ներդրման օրենքի» (WIA, Workforce Investment Act) շրջանակներում: Կալիֆորնիայի ամերիկյան աշխատանքային կենտրոնը (AJCC, America's Job Center of California) առաջարկում է աշխատուժի զարգացման համապարփակ ռեսուրսներ՝ ողջ նահանգի տարածքում տեղակայված և տեղական կազմակերպությունների միջոցով: Այս կենտրոնները կառավարվում են Աշխատուժի ներդրման խորհրդի (WIB, Work Investment Board) կողմից, որը բաղկացած է բիզնեսի, աշխատանքային կազմակերպությունների, կրթական հաստատությունների և համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչներից:

WIB-ը նշանակվում է Կառավարչի կողմից և աջակցում է Կառավարչին՝ նահանգային ծրագիրն ստեղծելու և համապատասխան քաղաքականություններ մշակելու Կալիֆորնիայի ամերիկյան աշխատանքային կենտրոնի AJCC գործունեության համար: Չբաղվածության զարգացման վարչությունը (EDD, Employment Development Department) առաջնային պատասխանատվություն ունի Կալիֆորնիայի AJCC-ի համար:

Ո՞րն Է Կալիֆորնիայի ամերիկյան աշխատանքային կենտրոնի նպատակը:

AJCC գործողությունների նպատակն է խթանել կենտրոնի մասնակիցների զբաղվածության, աշխատանքի պահպանման, վաստակած եկամուտների և մասնագիտական հմտությունների աճը: AJCC գործողությունները նախատեսված են բարելավելու աշխատուժի որակը, նվազեցնելու բարեկեցության և այլ պետական նպաստներից կախվածությունը, ինչպես նաև բարձրացնելու բնակչության աշխատուժի արդյունավետությունը:

Ո՞վ Է իրավունակ ստանալու Կալիֆորնիայի ամերիկյան աշխատանքային կենտրոնի ծառայությունները:

WIA-ի 1-ին վերնագիրը լիազորում է AJCC ծառայություններ երիտասարդների, չափահասների և աշխատանքը կորցրած անձանց համար: Սա ներառում է հաշմանդամ և ոչ հաշմանդամ անձանց:

- A. **Երիտասարդներ** . Իրավունակ երիտասարդները պետք է 14-21 տարեկան լինեն, ցածր եկամուտ ունենան և բավարարեն աշխատանքի 6 առանձնահատուկ արգելքներից առնվազն 1-ը:
- B. **Չափահասներ** . Իրավունակ չափահասները պետք է լինեն 18 տարեկան և ավելի:
- C. **Աշխատանքը կորցրած անձինք** . Աշխատանքը կորցրած իրավունակ անձինք, որոնց աշխատանքին վերջ է տրվել և որոնք հավանական չէ, որ կվերադառնան իրենց նախկին աշխատանքին:

Աշխատանքից ազատված տնային տնտեսուհիներ և ինքնազբաղ անձինք նույնպես կարող են AJCC ծառայությունների իրավունք ունենալ:

Ծառայություններ չափահասների և աշխատանքը կորցրած բանվորների համար Կալիֆորնիայի ամերիկյան աշխատանքային տեղական կենտրոնների միջոցով: AJCC-ի ողջ տարին իրականացվող երիտասարդական ծրագիրը շեշտում է հիմնական հմտությունների ձեռք

բերման ունակությունները, ձեռք բերված ակադեմիական և մասնագիտական վերապատրաստումը և ապահովում է աշխատաշուկայի և զբաղվածության բացահայտումը: Ծրագիրը հատուկ ուշադրություն է դարձնում դպրոցից դուրս մնացած երիտասարդներին մատուցվող ծառայություններին:

Կալիֆորնիայի ամերիկյան աշխատանքային կենտրոնի ծառայություններ

AJCC-ներն օգտագործում են տարբեր տեսակի ռազմավարություններ՝ ամենահարմար և ամենաարդյունավետ ծառայությունները տրամադրելու, որպեսզի բավարարեն իրենց համայնքի սպասառուների կարիքները:

- **Հիմնական ծառայությունները** մատչելի են և կարող են ներառել աշխատաշուկային վերաբերող տեղեկություններ, հմտությունների մակարդակների նախնական գնահատում և աշխատանքի որոնում, ինչպես նաև աշխատանքի տեղավորման աջակցություն:
- **Ինտենսիվ ծառայությունները** մատչելի են իրավունակ գործազուրկ անձանց, ովքեր ամբողջությամբ ստացել են առնվազն մեկ հիմնական ծառայություն, սակայն ի վիճակի չեն եղել աշխատանք ձեռք բերել, կամ աշխատանքով ապահովված անձը լրացուցիչ ծառայությունների կարիք ունի՝ ձեռք բերելու կամ պահպանելու աշխատանքը, որը կհանգեցնի անձնական ինքնաբավարարության:
- **Վերապատրաստման ծառայությունները** մատչելի են այն իրավունակ անձանց, ովքեր բավարարել են ինտենսիվ ծառայությունների պահանջները և ի վիճակի չեն եղել ձեռք բերել կամ պահպանել աշխատանքը: «Անհատական վերապատրաստման հաշիվներ» (ITA) միավորումն ստեղծվել է՝ ֆինանսավորելու այն վերապատրաստումները, որոնք հիմնված են անձի կողմից ընտրված վերապատրաստման ծրագրի վրա:

Կալիֆորնիայի ամերիկյան աշխատանքային կենտրոնի մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար Դուք կարող եք այցելել Չբաղվածության զարգացման վարչության EDD կայքէջ՝

www.edd.ca.gov: Դուք կարող եք տեղակայել Ձեր տեղական AJCC-ը՝ մուտքագրելով Ձեր փոստային դասիչը (zip code)՝ «Գտեք Ձեզ ամենամոտ գտնվող Կալիֆորնիայի ամերիկյան աշխատանքային կենտրոնը» (Find an America's Job Center of California near you) հարթակում:

Դուք նաև կարող եք դիմել (PABSS, Protection and Advocacy for Benefits of Social Security) միավորմանը՝ Disability Rights California-ում՝ 800-776-5746 հեռախոսահամարով:

SSA-ը վերանայել է հետևյալ հրատարակությունը՝ միայն տեխնիկական ճշգրտության համար. սակայն սա չպետք է (SSA, Social Security Administration)-ի պաշտոնական փաստաթուղթ համարվի:

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝ <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.